ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Ամեն. Պատրիարքին Հայոց Թուրքիոյ, որով պատուիրեցաւ տալ վերադարձնել զգործ ամուսնալուծութեան Սաթենկայ Արևեան Զմիւռնացւոյ։ Թ. 357.

— Շրջաբերական յանուն վիճակային Կոնսիստորիայից Հայոց Ռուսաստանի, որով արգիլեցաւ առանց դիմելոյ ի Սինոդ Ս. Էջմիածնի՝ տալ զհրամանս պսակաց եօթներորդ աստիճանի ազգականութեան։ Թ. Թ. 368, 372, 373, 374, 375 և 381.

— Ցանուն վիճ. Կոնսիստորիային Երևանայ, որով լուծեցաւ պսակ վանեցի Մանուկայ Ամէմեան՝ տպօրինաբար կենակցողին ընդ ռեհանլուեցի Մարիամու Գրիգորեան, ընդ կնոջն Հայկանուշի, տալով վերջնոյս իրաւունս վերստին ամուսնութեան և զրկելով զապօրինի կենակիցսն յիրաւանց ամուսնութեան և ի չնորհաց ս. եկեղեցւոյ, միայն արժանի առնելով վերջին թոշակին։ Թ. 369.

— Ցանուն Առաջնորդի Հայոց Բեսսարաբիոյ, որով բարձմամբ դատապարտութեանն ի գեներալ լէյտենանտ Նիկողայոսէ Աքիմեանց, թոյլ տուաւ վերստին մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 382.

— Ցանուն Դեր. Տ. Գէորգ Արք-եպիսկոպոսի, որով կարգեցաւ պատգամաւոր ընդ Ցուսիկ և Խորէն Մուրադբէգեան վարդապետս ի գնալ Տփխիս և ներկայանալ ի կողմանէ Նորին Սրբութեան Տ. Փոխարքային։ Թ. 390.

— Յանուն Գեր. Տ. Ղևոնդ եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ տալ աստիճան վարդապետութեան աբեղայիցն՝ Սահակայ, Բառնաբասայ, Լևոնի, Ուխտանէսի, Երուանդայ և Տաճատայ։ Թ. 392.

— Յանուն Առաջնորդի հայոց Վրաստանի և Իմեր. որով պատուիրեցաւ հոգալ ի վիճ. արդեանց զծախս երթևեկութեան պատգամաւորութեան, որ ունի շնորհաւորել զգալուստ Տ. Փոխարքային։ Թ. 398.

— Յանուն Փոխանորդի վիճ. հայոց Կարուց, որով բառնալով զիրաւունս շինութեան եկեղեցւոյն Կաղզուանի ի Զաքարիայէ Զանփոլադեան, պատուիրեցաւ կարգել ի Ժողովրդենէ զհոգաբարձուս և սկսանել զկառուցումն եկեղեցւոյն։ Թ. 409.

— Յանուն վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ, որով Տ. Ղևոնդ եպիսկոպոսն կարգեցաւ նախագահ Կառավարութեան և Տաճատ վարդապետ անդամ նոյն Կառավարութեան։ Թ. 412.

— Յանուն Առաջնորդի հայոց Ամերիկայի, որով արտօնեցաւ բացառապէս վասն վիճակին՝ թոյլտուութիւն պսակաց վեցերորդ աստիճանի ազգականութեան և չորրորդ և երրորդ աստիճ. խնամութեան հանդերձ խորթութեան ի հօրէ և ի մօրէ։ Թ. 413.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ կարգադրել ստանալ միաբանեայ արտասահմանեան անցագիր վասն Գրիգոր եպիսկոպոսի Գառնակերեան։ Թ. 414.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, ընդ որում յղելով զպատճէն գրութեան Տ. Նախարարի Ներքին Գործոց, որ վասն փոխելոյ զօրէնս 1891 ամի վերաբերեալ աքսորման հայ հոգևորականաց, պատուիրեցաւ ծանուցանել զայսմանէ Առաջնորդաց հայոց Ռուսաստանի և ի ձեռն նոցին համօրէն հոգևոր պաշտօնէից։ Թ. 19.

— Ցանուն Փոխանորդի վիճ. Ալէքսանդրապոլու, որով լուծեցաւ պսակն Սէյրանայ Մանուկեան ընդ անյայտացեալ առն Աղաջանայ Համբարեան Լիչ գիւղացւոյ Մուշ գաւառի, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն։ Թ. 447.

— Ցանուն վիճ. Կոնսիստ. հայոց Վրաստանի և Իմերէթի, որով յայտնեցաւ եթէ Մատթէոս և Խորէն վարդապետք կարգեալ են վերահսկող արդեանց ուխտին ս. Գէորգայ Թէլէթի։ Թ. 451.

— Ցանուն լուսաբարապետի Մայր Տաճարի Ս. Էջմիածնի, որով Գէորգ վարդապետն Ռշտունի կարգեցաւ ժամօրհնող և Եսայի վարդապետն խոստովանահայր։ Թ. 457.

— Ցանուն պ. Կարապետի Կոստանեան, որով համաձայն հրաժարականի իւրոյ, ազատ կացուցաւ ի պաշտամանէ տեսչութեան Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ։ Թ. 458.

— Ցանուն տ. Մատթէոս վարդապետի, որով ընդ տ. Խորէն վարդապետի կարգեցան վերահսկող արդեանց ուխտին ս. Գէորգայ Թէլէթի։ Թ. 459,

— Ցանուն Առաջնորդի հայոց Վրաստանի և Իմերէթի, որով կարգեցաւ տ. Սահակ վարդապետն Բաղդասարեան Փոխանորդ վիճակին Գանձակայ։ Թ. 471.

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ լուծանել զպսակ Կոստանդնի Օրբէլեան ընդ կնոջն և արտօնել երկոցունցն մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 474.

— Ցանուն դորձակալի շրջանին Վաղարշապատայ, որով լուծեցաւ պսակ տաճկահպատակ Մարիամու Վարդանեան ընդ խելագար առն Ցակոբայ Վարդանեան, արտօնելով կնոջն ամուսնանալ ընդ այլում։ Թ. 475.

— Ցանուն Բարսեղ էֆ. Իսթանպոլլուեան Կ. Պոլսեցւոյ, որով տուաւ տեղեկութիւն զստացմանէ յղեալ 10 օսմ. լիրայից։ Թ. 478.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն երեսփոխի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Երեւան քաղաքի Դիմիտրիի Պապովեան։ Թ. 370.

— Ցանուն դանձապետի Մ. Աթոռոյ, որ ի ս. Աստուածածին եկեղեցւոջ Նուխի քաղաքի, Գրիգորի Գեանջու